ՍԴ1/0115/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5 մայիսի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ1/0115/01/23 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 16-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի հոկտեմբերի 3-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արսեն Ալբերտի Բաբայանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի 5-րդ մասով թիվ 90575723 (ՍԴ1/0115/01/23) քրեական վարույթը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 6-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0115/01/23 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 18-ին որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 2-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0115/01/23 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մարտի 21-ին որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի ապրիլի 16-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0115/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի ապրիլի 28-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ Արսեն Ալբերտի Բաբայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի 5-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա, ՀՀ կառավարության 27.09.2020թ. թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված «Ռազմական դրության» պայմաններում՝ 05.10.2020թ-ին զորահավաքային զորակոչով զորակոչված լինելով ՀՀ զինված ուժեր, ՀՀ ՊՆ 73128 զորամասում ծառայության նշանակվելուց հետո, մարտական կիրառման շրջանից 2020 թվականի հոկտեմբերի 06-ին վերադարձել է զորամասի տեղակայման վայր, հանձնել իրեն ամրակցված զենք-զինամթերքը, ինքնակամ թողել է զորամասը, միայն 2020 թվականի նոյեմբերի 18-ին ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին՝ այդ կերպ ծառայությունից բացակայելով մեկ ամսից (240 ժամից) ավելի տևողությամբ»*[1]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մարտի 21-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) 2025 թվականի մարտի 21-ին կայացած նախնական դատաքննությունների ընթացքում հանրային մեղադրող՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի ավագ դատախազ Վ.Մարտիրոսյանը նշեց, որ սույն քրեական վարույթով վկաներից երկուսի բնակության հասցեները թեպետ Երևանում է, սակայն, նշված անձանց ծառայության հասցեները գտնվում են Արարատի մարզի տարածքում, բացի այդ մեղադրյալը ևս հանդիսանում է Արարատի մարզի բնակիչ, ինչով պայմանավորված դատավարության կողմերին ավելի նպատակահարմար է դատական նիստերին ներկայանալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան, ուստի միջնորդեց սույն*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 225-226:

քրեական վարույթը տարածքային ընդդատության կարգով փոխանցել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանին:

Պաշտպան Մազման Պողոսյանը միացավ հանրային մեղադրողի միջնորդությանը, միաժամանակ նշեց, որ մեղադրյալի համար ավելի նպատակահարմար է իր բնակության տարածքին՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքին մոտ գտնվի դատարանը, ինչպես նաև վկաներին ևս նպատակահարմար է դատական նիստերին ներկայանալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան, պայմանավորված վերջիններիս ծառայության վայրի գտնվելու տեղով, ուստի պաշտպանը ևս միջնորդեց սույն քրեական վարույթը տարածքային ընդդատության կարգով փոխանցել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանին:

Մեղադրյալ Արսեն Բաբայանը միացավ իր պաշտպանի դիրքորոշմանը:

(…)

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի մասնավոր մասնակից՝ մեղադրյալ Արսեն Ալբերտի Բաբայանը բնակվում է Արարատի մարզում, իսկ վկաների մեծ մասի բնակության հասցեն թեպետ Երևան քաղաքում է, սակայն, վերջիններս ծառայությունն իրականացնում են Արարատի մարզում, իսկ հանրային մեղադրողը միջնորդել է քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել, ուստի դատարանը գտնում է, որ թիվ ՍԴ1/0115/01/23 քրեական վարույթի քննությունն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորերի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հաշվի առնելով, որ դատական գործի պատշաճ ընդդատությունը հանդիսանում է արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ և հիմնարար իրավական արժեք, իսկ սույն դեպքում քրեական վարույթը ընդդատյա չէ Երևան առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրական դատարանին, հետևաբար արդար

դատաքննության իրավունքի ապահովման անհրաժեշտությունից ելնելով սույն քրեական վարույթն անհրաժեշտ է փոխանցել ըստ ընդդատության: (…)»[2]*:*

7. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով վերը շարադրված իրավական նորմերի համատեքստում՝ հարկ է արձանագրել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փոխելով վարույթի տարածքային ընդդատությունը, առերևույթ չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մեղադրյալ Արսեն Ալբերտի Բաբայանը բնակվում է Արարատի մարզ, քաղաք Մասիս, 7-րդ փողոց, 49 տուն հասցեում, վկա Արտակ Վարդանի Վարդանյանը բնակվում է քաղաք Երևան, Սարկավագի 128բ շենք, բնակարան 34/1 հասցեում, վկա Սուրեն Ալեքսանի Բեբությանը բնակվում է քաղաք Երևան, Նուբարաշենի 11-րդ փողոց, 22 շենք, բնակարան 11 հասցեում, վկա Արտոս Տավրոսի Սաֆարյանը բնակվում է Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Մինաս Պապյան 5/15 հասցեում (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, գ.թ. 273): Պաշտպան Մազման Պողոսյանը բնակվում է քաղաք Երևան, Ռոստովյան 6 հասցեում: Այսինքն՝ վարույթի մասնավոր մասնակիցներից և վկաներից (ընդհանուր թվով 5 անձ) միայն մեկն է բնակվում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Հետևաբար, չի հաստատվում վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի դատական տարածքում բնակվելու հանգամանքը:*

Ամփոփելով ասվածը՝ Դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքն առերևույթ բացակայում է, ուստի անհրաժեշտ է թիվ ՍԴ1/0115/01/23 վարույթն ուղարկել Վճռաբեկ

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 90-93:

դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հարցի որոշման համար: (...)»:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից թիվ ՍԴ1/0115/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[3]:

---

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[4]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»:*

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում*

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության՝ բացառելով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերի զուտ տեխնիկական հաշվառմամբ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հնարավորությունը:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում, նախնական դատալսումների ընթացքում, հանրային մեղադրողը միջնորդել է սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը փոխանցել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[6]:

- Սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, դատական նիստի արձանագրություն, թերթեր 86-89:

դատարան փոխանցելու վերաբերյալ մեղադրողի միջնորդությանը միացել է նաև պաշտպան Մ.Պողոսյանը[7]:

- Մեղադրյալ Ա.Բաբայանն իր համաձայնությունն է հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի և վարույթը փոխանցվի Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ մեղադրյալ Ա.Բաբայանը բնակվում է Արարատի մարզում, իսկ վկաների մեծամասնության բնակության հասցեն թեև Երևան քաղաքն է, սակայն վերջիններս ծառայություն են իրականացնում Արարատի մարզում, որոշում է կայացրել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[9]:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ սույն քրեական վարույթով ներգրավված անձանցից միայն մեկ վկան է բնակվում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքն առերևույթ բացակայում է[10]:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային

---

[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Տե՛ս նույն տեղում:
[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ընդդատությունը փոխելու լիազորությամբ, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալի համաձայնությամբ փոխել և վարույթն Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպան Մ.Պողոսյանի բնակության վայրը Երևան քաղաքն է[11], մեղադրյալ Ա.Բաբայանի բնակության վայրն Արարատի մարզն է, վկա Ա.Սաֆարյանի բնակության վայրը՝ Սյունիքի մարզը, իսկ վկաներ Ա.Վարդանյանի և Ս.Բեբությանի հաշվառման/բնակության հասցեն թեև նշված է Երևան քաղաքը[12], սակայն, ըստ վարույթի նյութերի և հանրային մեղադրողի հայտարարության, վերջիններս զինվորական ծառայություն են իրականացնում Վայոց ձորի մարզում[13]: Այսինքն, սույն վարույթին ներգրավված են հինգ մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնց մեծամասնությունը՝ երեք անձ, բնակվում (փաստացի գտնվում) է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

16. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից թիվ ՍԴ1/0115/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

17. Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման՝ ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտությունից, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է,

---

[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 274:
[12] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 274:
[13] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 205-209, 212, 216, հատոր 4, դատական նիստի արձանագրություն, թերթ 89:

որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՍԴ1/0115/01/23 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ